ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» մայիսի 2018 թվականի N 168-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 271-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով, ***որոշում եմ.***

1. Համայնքի ղեկավարի 2017 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 271-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1)որոշմամբ հաստատված NN 2, 4, 6, 7, 8, 10, 12, 13, 14, 15, 16 և 17 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համապատասխանաբար NN 1-12 հավելվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. մայիսի 10
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» մայիսի 2018 թվականի N 169-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐՎԵԺԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետի, ***որոշում եմ.***

1. 2018 թվականի հունիսի 15-ին, ժամը 10:00-ին հայտարարել մրցույթ հետևյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար.

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար - (ծածկագիր՝ 1.2-1),

2. 2018 թվականի հունիսի 15-ին, ժամը 12:00-ին հայտարարել մրցույթ հետևյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար.

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժին պետ - (ծածկագիր՝ 2.1-1),

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ - (ծածկագիր՝ 2.1-2),

3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետ - (ծածկագիր՝ 2.3-1),

4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետ - (ծածկագիր՝ 2.3-2),

5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ - (ծածկագիր՝ 2.3-3),

6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ - (ծածկագիր՝ 2.3-4),

3. 2018 թվականի հունիսի 18-ին, ժամը 10:00-ին հայտարարել մրցույթ հետևյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար.

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջատար մասնագետ - (ծածկագիր՝ 3.1-1),

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջատար մասնագետ - (ծածկագիր՝ 3.1-2),

3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ - (ծածկագիր՝ 3.1-3),

4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ - (ծածկագիր՝ 3.1-4),

5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ - (ծածկագիր՝ 3.1-5),

4. 2018 թվականի հունիսի 18-ին, ժամը 14:00-ին հայտարարել մրցույթ հետևյալ թափուր պաշտոններն զբաղեցնելու համար.

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջին կարգի մասնագետ - (ծածկագիր՝ 3.2-1),

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ - (ծածկագիր՝ 3.2-2),

3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ - (ծածկագիր՝ 3.2-3),

4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի երկրորդ կարգի մասնագետ - (ծածկագիր՝ 3.3-1),

5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի երկրորդ կարգի մասնագետ - (ծածկագիր՝ 3.3-2):

5. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարությունների տեքստերը՝ համաձայն NN 1, 2, 3, 4 հավելվածների:

6.Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմին՝ սահմանված կարգով իրականացնել մրցույթների նախապատրաստական աշխատանքները:

7.Մրցութային հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնող լիազորված անձ նշանակել Գարեգին Բադալյանին:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. մայիսի 11
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ու Մ

«14» մայիսի 2018 թվականի N 170-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Էմիլ Կարապետի Շիմշիրյանի (ծնված՝ 1974 թվականի հունիսի 3-ին) լիազորված անձ Արմինե Տիգրանի Սահակյանի (ծնված՝ 1980 թվականի սեպտեմբերի 5-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով Էմիլ Կարապետի Շիմշիրյանին պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր-2 այգետարածքի 29-րդ թաղամասի թիվ 26 հասցեի հողակտորում ինքնակամ կառուցված շինությունները, ինքնակամ բացված երկու պատուհանները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական N 2376169, տրված անշարժ գույքի կադաստրի կոմիից 2009 թվականի հոկտեմբերի 28-ին, «ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ» ՍՊԸ-ի կողմից 2018 թվականի մայիսի 5-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Էմիլ Կարապետի Շիմշիրյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր-2 այգետարածքի 29-րդ թաղամասի թիվ 26 հասցեի հողամասում 2005-2010 թվականներին ինքնակամ կառուցել է այգետնակ՝ 234,9 քառ.մետր և պարիսպ՝ 1,1 քառ.մետր արտաքին մակերեսներով և ինքնակամ բացել է երկու պատուհաններ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13, 18-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն, որ որ Էմիլ Կարապետի Շիմշիրյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր-2 այգետարածքի 29-րդ թաղամասի թիվ 26 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների և ինքնակամ բացված երկու պատուհանները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1.Էմիլ Կարապետի Շիմշիրյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր-2 այգետարածքի 29-րդ թաղամասի թիվ 26 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված շինությունները, ինքնակամ բացված երկու պատուհանները համարել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221213 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 617 656 (վեց հարյուր տասնյոթ հազար վեց հարյուր հիսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. մայիսի 14
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» մայիսի 2018 թվականի N 171-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՈՏՆԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1477-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Հատիսի փողոցի թիվ 20 տան բնակիչ Սլո Քյարամի Դրբոյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1. Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արոտները՝ 119,95 հեկտար մակերեսով, մեկ տարի ժամկետով վարձակալությամբ տրամադրել Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Հատիսի փողոցի թիվ 20 տան բնակիչ Սլո Քյարամի Դրբոյանին՝ անասնագլխաքանակի արածեցման նպատակով:

2. Վարձակալությամբ տրամադրվող արոտի տարեկան վարձավճարի չափը կազմում է 50 000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Արտակ Վարդանյանի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. մայիսի 14
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» մայիսի 2018 թվականի N 172-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Կարեն Ապրեսի Բրուտյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 42-րդ փողոցի թիվ 10 հասցեի տնամերձ հողամասում տալ բնակելի տան վերակառուցման շինարարության թույլտվություն:

2. Քաղաքացի Մուշեղ Տիգրանի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 28-րդ փողոցի թիվ 23 հասցեի տնամերձ հողամասում տալ բնակելի տան վերակառուցման շինարարության թույլտվություն:

3. Պարտավորեցնել Կարեն Ապրեսի Բրուտյանին և Մուշեղ Տիգրանի Խաչատրյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. մայիսի 14
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» մայիսի 2018 թվականի N 173-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

Թույլատրել Ջրվեժի համայնքապետարանին՝ իրականացնելու Ջրվեժ համայնքում ներհամայնքային ճանապարհների ասֆալտ բետոնե ծածկի փոսային նորոգման շինարարական աշխատանքները, համաձայն «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-18/13» գնման պայմանագրի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. մայիսի 15
գ. Ջրվեժ